ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
«ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԵՎ
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊՈԱԿ

ՀՀ ԳԱԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ

Համագործակցության հուշագիր
ՀՀ վարչապետի աշխատակազմի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի և ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի (ԱԻ) միջև

ք. Երևան 25.01.2025թ.

«Հանրային կապերի և տեղեկատվության կենտոն» ՊՈԱԿ-ը, այսուհետ Կենտրոն, և **ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտը**, այսուհետ **(ԱԻ)**, միասին՝ **Կողմեր**, կնքել են համագործակցության մասին հուշագիր (այսուհետ՝ Հուշագիր) հետևյալի մասին.

1.Կողմերը կիրականացնեն գործընկերություն և երկարաժամկետ համագործակցություն, որի նպատակներն են.

1.1. ԱԻ երիտասարդ փորձագետներին աջակցությունը և պետական տեղեկատվական քաղաքականության տարբեր ոլորտներում նրանց անմիջական մասնակցության հնարավորության ապահովումը,
1.2. Կենտրոնի փորձագետներին աջակցությունը՝ արևելագիտության ոլորտում գիտական գործունեություն ծավալելու հնարավորությունների դեպքում,
1.2. Երկկողմ մասնագիտական-փորձագիտական աջակցության և խորհրդատվության տրամադրումը,
1.3. Երիտասարդ կադրերի համատեղ վերապատրաստումը,
1.4. Հանրային կապերի և տեղեկատվության, արևելագիտության ոլորտներում մասնագիտական գիտելիքների փոխանակումը:

2. Կողմերի համագործակցության հիմնական ուղղություններն են.
2.1. Համատեղ ֆորումների, գիտաժողովների, ամառային և ձմեռային դպրոցների, սեմինարների, կլոր սեղանների և վարպետաց դասերի կազմակերպում ու անցկացում Կենտրոնի և ԱԻ անձնակազմի, ուսանողների, երիտասարդ հետազոտողների, տարբեր ոլորտների առաջատար մասնագետների, գիտնականների, միջազգային մասնագետների ներգրավմամբ,
2.2. Փորձագիտական խորհրդատվություն, գիտական աշխատանքների վերլուծություն, ԱԻ պարբերականներում գիտական հոդվածների, Կենտրոնի ռեսուրսներում՝ վերլուծական, քարոզչական նյութերի հրապարակում և այլն,
2.3. Արդիական հարցերի շուրջ ընդհանուր նախագծերի մշակում և իրականացում (գիտական և կիրառական հետազոտություններ, սոցիոլոգիական հարցումներ և այլն),
2.4. Հնարավորության դեպքում միմյանց ենթակառուցվածքային բնույթի աջակցության տրամադրում միջոցառումների կազմակերպման նպատակով,
2.5. Պետական գերատեսչությունների անձնակազմի մասնագիտական կարողությունների զարգացմանն ուղղված դասընթացների շարքի իրականացում,
2.6. Փոխադարձ աջակցություն գիտավերլուծական աշխատանքների հանրայնացման հարցում:

3. Համագործակցության շրջանակում կողմերն առաջնորդվում են հետևյալ սկզբունքներով.
3.1. Թափանցիկություն միմյանց, ինչպես նաև երրորդ կողմի հետ համագործակցելիս,
3.2. Հավասարություն և փոխշահավետություն,
3.3. Կողմերի գործունեության համապատասխանություն նրանց նպատակներին և գործունեության տեսլականին, հարգանք կողմերի շահերի նկատմամբ,
3.4. Կողմերից մեկին պատկանող կոնֆիդենցիալ տեղեկատվության հրապարակում միայն տվյալ կողմի համաձայնության դեպքում,
4. Կողմերը սահմանում են համապատասխան ներքին կառուցվածքներն ու ստորաբաժանումները՝ համագործակցության հիմնական ուղղությունները համակարգելու նպատակով,
5. Համագործակցության հետևողական զարգացումը գնահատելու համար կողմերը պարբերաբար կանցկացնեն հաշվետու հանդիպումներ՝ կողմերի ղեկավարների մասնակցությամբ,
6. Սույն հուշագիրը չի սահմանափակում կողմերի՝ այլ կազմակերպությունների հետ համագործակցությունը, այդ թվում՝ վերը նշված ծրագրերի կյանքի կոչման համար,
7. Սույն հուշագիրը չի դիտարկվում որպես նոր իրավաբանական անձի ստեղծման պայմանագիր, չի դիտարկվում որպես գործընկերության կամ նմանատիպ պայմանագիր, որն իրենից ենթադրում է համատեղ գույքի ստեղծում: Անհրաժեշտության դեպքում իրագործվող նախագծերի բոլոր ծախսերն իրականացվում են Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը համապատասխան՝ այլ համաձայնագրերի հիման վրա, որոնց կնքման նպատակահարմարությունը որոշվում է համագործակցության ընթացքում,
8. Հուշագիրն ուժի մեջ է մտնում նրա ստորագրման պահից և գործում է մինչև 2027 թվականի հունվարի 1-ը,
9. Հուշագիրը կազմված է երկու օրինակից՝ մեկական օրինակ յուրաքանչյուր կողմի համար,
10. Սույն հուշագրի իրականացման ընթացքում առաջացած ցանկացած տարաձայնություն կողմերը պարտավոր են լուծել փոխադարձ համաձայությամբ՝ խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով,
11. Սույն հուշագրով չկարգավորվող այլ հարցերում կողմերն առաջնորդվում են ՀՀ օրենսդրությամբ:

Կողմերի ստորագրությունները

ՀՀ վարչապետի աշխատակազմի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ	ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի
Տնօրեն	Տնօրեն
Գ. Ծառուկյան	**Գ. Իսկանդարյան**